# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Ալագյազ, 093-38-84-14 , alagyazhp@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 42

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 19-Ի N11 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 6-րդ մասերով և հիմք ընդունելով Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ավագանու 2021 թվականի օգոստոսի 19-ի N11 հերթական նիստի օրակարգը.

1.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2021 թվականի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին,

2.Ալագյազ համայնքի 2021 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին,

3.Ալագյազ համայնքի Շենկանի բնակավայր տանող ճանապարհի ասֆալտապատում և Սադունց բնակավայրի փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման աշխատանքների համար գումար հատկացնելու մասին

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՌԵԶՈ

ՄՈՒՐԱԶՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՎԵՇՅԱՆ ՆՎԵՐ

ՌԱԶԳՈԵՎ ՅՈՒՐԻ

ՍԱԴԵՅԱՆ ՄԻՐՈ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՔԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Ալագյազ, 093-38-84-14 , alagyazhp@mail.ru


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 43

## ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով և 77-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Հաստատել Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2021 թվականի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները՝ համաձայն հավելվածի 1-ի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՌԵԶՈ

ՄՈՒՐԱԶՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՎԵՇՅԱՆ ՆՎԵՐ

ՌԱԶԳՈԵՎ ՅՈՒՐԻ

ՍԱԴԵՅԱՆ ՄԻՐՈ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՔԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Ալագյազ, 093-38-84-14 , alagyazhp@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 44

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ալագյազ համայնքի Շենկանի և Սադունց վարչական բնակավայրերում սուբվենցիոն ծրագրով իրականացվելու է ասֆալտապատման աշխատանքներ, Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

Ալագյազ համայնքի 2021 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.Ալագյազ համայնքի Ֆոնդային բյուջեի «Փողոցների լուսավորություն» ծրագրի 5112 (շենք շինությունների կառուցում) հոդվածից 5500000 (հինգ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ և 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածից 500000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ պակասեցնել,

2.Ալագյազ համայնքի Ֆոնդային բյուջեի «Կառավարչական ապարատ» ծրագրի 5112 (շենք շինությունների կառուցում) հոդվածից 53.500.000 (հիսուներեք միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ և 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածից 1.300.000 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ պակասեցնել,

3.Ալագյազ համայնքի Ֆոնդային բյուջեի «Ալագյազի գազաֆիկացում» ծրագրի 5112 (շենք շինությունների կառուցում) հոդվածից 19.000.000 (տասնինը միլիոն) ՀՀ դրամ և 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածից 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ պակասեցնել,

4.Ընդհանուր 82.000.000 (ութսուներկու միլիոն) ՀՀ դրամը տեղափոխել Ալագյազ համայնքի ֆոնդային բյուջեի «Ճանապարհային տրանսպորտ» ծրագրի 5112 (շենք շինությունների կառուցում հոդվածին):

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՌԵԶՈ

ՄՈՒՐԱԶՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՎԵՇՅԱՆ ՆՎԵՐ

ՌԱԶԳՈԵՎ ՅՈՒՐԻ

ՍԱԴԵՅԱՆ ՄԻՐՈ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՔԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Ալագյազ, 093-38-84-14 , alagyazhp@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 45

## ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԵՆԿԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՍԱԴՈՒՆՑ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՓՈՂՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 89-րդ հոդվածի, 90-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Ալագյազ համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 3-ի N 36 և N 37 որոշումները, ինչպես նաև Ալագյազ համայնքի ղեկավարի և «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի միջև 20 մայիսի 2021 թվականին կնքված N ՀՀԱՄ-ԱՀ-ԳՀԾՁԲ-21/09 պայմանագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Թույլատրել համայնքի ղեկավարին Ալագյազ համայնքի 2021 թվականի բյուջեի «Ճանապարհային տրանսպորտ» ծրագրի 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածից 797500 (յոթ հարյուր իննսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ փոխանցել «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ին, որպես Ալագյազ համայնքի Շենկանի բնակավայր տանող ճանապարհի ասֆալտապատում և Սադունց բնակավայրի փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման աշխատանքների համար՝ համայնքի 55 տոկոս մասնաբաժինը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՌԵԶՈ

ՄՈՒՐԱԶՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՎԵՇՅԱՆ ՆՎԵՐ

ՌԱԶԳՈԵՎ ՅՈՒՐԻ

ՍԱԴԵՅԱՆ ՄԻՐՈ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՔԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ**